

դերութենէրու առիթ կուտայ զինուորական տուրքի դանձումը:

Փոխադարձ այցելութիւն. — Մահմուտ Շէվքէթ լիաշա երեւի խոխադարձ այցելութիւն տուաւ Տեղապահ Սրբազանին, ընկերակցութեամբ թիկնապահի մը. Տեղապահը ողորդական հրամանատարին ճակատը համբուրեց և հրաւիրեց բաղմիկ պատուոյ թիկնաթուղ: Շէվքէթ լիաշա կէս ժամու չափ սիրալիւր տեսակցութիւն մը ունեցաւ Տեղապահին հետ սրտապնդիչ խօսքեր ընելով Հայ Ազգին նկատմամբ:

— Զմիւռնեայի առաջնորդ Տ. Եղիշէ Եպսկօպոսը ընտրուելով Կ. Պօլսոյ հայոց պատրիարք ստանձնել է իւր նոր պաշտօնը:

Նորին Սրբազնութիւնը ներկայացրել է Օգոստ. Սուլթանին այցելել է նախարարներին, աղագերի հոգեւոր պետերին, և ընդունել է նրանց փոխադարձ այցելութիւնները:



Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

ՄԵԾ ՄԱՐԴԻԿԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ.

Դպրոցը ապագայ մեծ մարդկանց օգուտ տուէ՞լ է, նպատակ է նրանց ամբարեւել աշն նիւթերը, որոնցով յետոյ կարողանար օգտուել նրանց հանճարը: Մեծ գիտնականների, գրողների, երաժիշտների կենսագրութիւնը այդ հարցերին պատասխանում է և մեծ մասամբ պատասխանը շատ աննպաստ է դպրոցների համար, մասնաւորապէս կլասիկական դպրոցների համար:

Մեծ մարդիկ, մեծ մասամբ, զեռ մանկական հասակում արտայայտել են որ և է հակումն և ընդունակութիւն, և բոլոր ուժով ձգտել են բաւականութիւն տալ այդ հակումներին, միանգամայն անուշադիր մնալով դէպի այն բաները, որոնք բաւականութիւն չեն տուել իրանց ընածին ոգևորութեան:

Եթէ նրանց կեանքի պայմանները մանկական հասակում դասաւորուել են այնպէս բացեյաջող, որ նրանց ծնողները կամ շրջապատողները դուշակել են երեխայի անգուգական յատկութիւնները և չեն ձգտել մղել նրան դէպի ընդհանուր շարքերը, այն ժամանակ նրանց զարգացումը անցել է շատ լաւ: Այդպէս է եղել Մօցարտի մանկութիւնը, որի մայրը նախատեսել

է իր տղայի մէջ դեռ մանկական հասակում ապագայ մեծ դաշնակահարին և նրան մեջոց է տուել ամբողջովին նուիրուել երաժշտութեան: Ութ տարեկան հասակում նա արդէն երաժիշտ էր:

Վիլիամ Տօմսօնը տաս տարեկան հասակում կարողացաւ մտնել համալսարան: Եւ եթէ Մօցարտը վաղ մեռաւ, ինչպէս ոմանք կարծում են շնորհիւ խիստ անժամանակ զարգացման, որ քայքայել էր նրա ուժերը, դրա հակառակ Տօմսօնը ապրեց մինչև ութսնամեայ հասակը մինչև վերջը անխոնջ եռանդով զբաղուեց գիտութեամբ:

Բայց ոչ բոլոր բացառիկ շնորհալի մարդկանց բազմը տուել է այդպիսի բարեյաջող պայմաններ զարգացման համար: Շատ շատերը բոխպուած են եղել մանկական հասակից կռուել հնամոլութեան դէմ կամ ստիպուած են եղել անձամբ միտուել իրանց ճանապարհը առանց ամենափոքր օգնութեան իրանց շրջապատողներէ կողմից: Դպրոցը շատ դառը խօսքեր պիտի լսէր իր սաներից, որ իր ժամանակին նրանց չի հասկացել, բայց յետոյ դնահատուել են ամբողջ աշխարհի կողմից:

Չալզ Դարվինը, որ առհասարակ խաղաղ և բարեխառն ընտելութիւն ունէր և իսկապէս մանկական հասակում բաւական բարեյաջող պայմաններում էր գտնուում, այն ուսումնարանի մասին, ուր նա սովորել էր, ասում էր. «Ոչ մի բան այնքան վատ չէր կարող լինել իմ զարգացման համար, որքան Դ-ր Բուտլերի դպրոցը. այս զուտ կլասիկական դպրոցը, ուր բացի հին լեզուներից ոչինչ չէր դասաւանդուում, եթէ հաշուի չառնենք պատմութեան և աշխարհագրութեան այն խորճուկ դասերը: Մի ուրիշ տեղ ասում է. «Ոչ ոք չի կարող ինձնից աւելի ուժգին արհամարհել հինը, միասպաղաղ, կլասիկական դաստիարակութիւնը»: Հասկանալի է թէ ինչը կարող էր խաղաղ Դարվինի մէջ առաջացնել այդպիսի բացականչութիւն: Իւր ամբողջ պատանեկան տարիները, երբ ուղեղը այնպէս թարմ և իւրացնող է, նա հարկադրուած էր ուսումնասիրել մեռած լեզուները, երբ նրան իշխանաբար կոչում էր դէպ ինքը կենդանի ընտելութիւնը: Նա կրէք չէր կարող ներել կլասիկական դպրոցին, որ անդարձ կերպով յափշտակել էր նրա ժամանակը:

Հելմհօլցը, որ գիմնազիայի նախկին վերատեսուչի որդի էր, ինքը խոստովանում էր, որ լատիներէնի դասերի ժամանակ նա ֆիզիքական խնդիրներ էր վճռում նստարանի տակ, որովհետեւ «Վերգելիոսն ու Ֆիցերոնը նրան սաստիկ ձանձրալի էին թւում»: Նա նոյնպէս որ և է երախտագիտական զգացմունք չէր տա-

ծում դէպի այն դպրոցական հաստատութիւնը, որտեղ նա ուսմանը էր:

Պէտք է նկատել, որ դպրոցն էլ մեծ մասամբ փոխադարձաբար վարձահատոյց է եղել մեծ մարդկանց, որոնք չեն ցանկացել ճանաչել նրա արժանիքները. դպրոցը նոյնպէս վերաբերուել է վերին աստիճանի անբարեհաճ դէպի այն սաները, որոնք իրանց հանձարի կամ տաղանդի շնորհիւ մարդկութեան առաջին շարքերումն են կանգնած եղել: Այսպէս օրինակ. Մէյերը համարուել է մեշտ դպրոցի վերջին աշակերտներից միւնը. իսկ Լիբիխը հարկադրուած էր հեռանալ դպրոցից անընդունակութեան պատճառով, «ուր երկար ժամանակ նրա ներկայութիւնը անարգանք էր համարուում»:

Հակառակ փաստերը խիստ րացառութիւն են կազմում: Խոշոր գիտնականներից կամ նկարիչներից քչերը իրանց կենսագրութեան մէջ մատնանշում են դպրոցի բարեյաջող, դարգացուցիչ ազդեցութեան մասին:

Ո՞ր ուրեմն մեծ մարդկանց օգնում է իրանց ճանապարհը գտնել և ամբարել իրանց անհրաժեշտ նիւթերը: Շատ շատ դէպքերում նրանց օգնականները եղել են դրբերը: Սրանցից նրանք ընտրել են այն, ինչ որ իրանց հարկաւոր է եղել, այնտեղից են քաղել իրանց ստեղծագործութեան բովանդակութիւնը: Շատերը, որոնք իրանց կենդանի ուսուցիչների մասին շատ էլ լաւ կարծիքի չեն եղել, տաք զգացմունքով խօսում են գիրք-բարեկամների մասին: Ընթերցանութեան անյադ ծարաւը անպագայ շատ մեծ մարդիկ ունեցել են վաղ մանկական հասակից և նորա, որոնք այդ ցանկութեան բաւականութիւն տալու արդէլքների են հանդիպել, աշխատել են իրանց դնել այնպիսի պայմանների մէջ, որ անարգել կարողանան նուիրուել ընթերցանութեան: Այսպէս, Ֆարադէյը որ երեւէր կլասիկական դպրոց չի յաճախել, իր դէպի ընթերցանութիւնն ունեցած կիրքը յապեցնելու համար դարձաւ կազմարար: Հելմհոլցը իր հաշիւները դպրոցի հետ վերջացնելուց յետոյ դարձաւ գրադարանապետի օգնական. Լիբիխն ասում է, որ ինքը կլանել է պալատական դրաքարանի, որտեղից հնարաւորութիւն ունէր օգտուելու, քիմիային վերաբերեալ բոլոր հեղինակութիւնները: Մէյեր իր առաջին միախնակ ճամբորդութիւնների ժամանակ տանում էր մի ամբողջ գրադարան:

Զարմանալու ոչինչ չկայ, որ գրքերից ուսանելը աւելի է համապատասխանում աչքի ընկնող անհատների պահանջներին, քան դպրոցական մարդանքը, եթէ նոյն իսկ նա այնպիսի սուր հակասութիւն չունի նրանց հակումների և ճաշակի նկատմամբ,

ինչպէս պատահել է օր. Դարվինի հետ: Նախ այստեղ ընդարձակ ապարդէղ կայ ընտրութեան համար, որը կարող է խիստ դժուար լինել միջակ ընդունակութիւնների տէրերի և գիտութեան այս կամ այն շրջանին առանձին տրամադրութիւն չունեցողների համար, բայց սա չափազանց յարմար է նրա համար, ով գիտէ, թէ և բնագդաբար, թէ ինքն ի՞նչ է փնտռում: Միւս կողմից ընթերցանութիւնը կատարեալ հնարաւորութիւն է տալիս նրան իր ժամանակը կարգադրել ազատօրէն, որ նոյնպէս գնահատելի է նրանց համար, որոնք պայծառ տեսնում են իրանց նպատակը:

Բացի դրեքերից, կենդանի մարդիկն էլ յաճախ բարերար ազդեցութիւն են ունեցել այն անհատների վրա, որոնք ապագայում շատ առաջ են գնացել իրանց ղեկավարներից: Բայց շատ հազուադիւր են եղել դարձեալ պաշտօնական ղեկավարները: Մեծ գիտնականներից շատերը խորին երախտագիտութեամբ յիշում են իրանց մայրերին, հօրեղբայրներին կամ հասակաւոր բարեկամներին: Նրեմն այդ ձևի օգնութիւնը, խրախուսանքը, նոյն իսկ պարզ համալիրանքը եղել են շատ գնահատելի դժուար բոլորներում, երբ ապագայ մեծ մարդիկ թերահաւատել են իրանց վրա, և դժգոհ են եղել, որպիսի հանգամանք տեղի է ունենում ամեն մի նուրբ զգացմունքի տէր մարդկանց մէջ:

«B. 3.»

Օ ձ ա ֆ ա ր .

Այն տեղերում, ուր վիստում են թունաւոր օձեր և որոնց խայթումը սովորական երեւոյթ է, հին ժամակներից յայտնի է մի տեսակ քար որ կոչւում է օձաֆառ, որին վերագրում են վէրքը բժշկող յատկութիւն: Այդ քարը գնում են վէրքի վրա և նա այնպիսի ուժով է վէրքից ծծում արիւնը, որ արեան հետ դուրս է գալիս և թոյնը:

Ներկայումս այդ քարի բազադրութիւնը ուսումնասիրուած է: Վերլուծութիւնը ցոյց է տուել, որ նա այրուած ոսկրի ածուխ է: Մինչև անգամ աշխատել են այդ ոտանալ արուեստականօրէն, այրելով լիդոսիլը կամ վայրի այծի եղջիւրը: Նրա բուժարար յատկութիւնը կասկածից դուրս է, ուստի և շատ օգտակար է, եթէ դրա ծանօթութիւնը լայն խաւերի մէջ տարածուի և ղեկատները ձեռք բերեն այդ ընդհանուր գործածութեան համար:

